ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- մարտի 2022 թվականի №-Ա
ք. Երևան

«ՍՈՒՆ ՍՈԼԱՐ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2020 թվականի մարտի 25-ի №86Ա որոշմամբ «ՍՈՒՆ ՍՈԼԱՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրվել է «Սուն Սոլար» արևային էլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0671 լիցենզիան (այսուհետ՝ ԼԷ №0671 լիցենզիա)՝ մինչև 2041 թվականի դեկտեմբերի 10-ը գործողության ժամկետով, որից կառուցման ժամանակահատվածը՝ մինչև 2021 թվականի դեկտեմբերի 10-ը,

բ) Հանձնաժողովի 2021 թվականի դեկտեմբերի 8-ի №433Ա որոշման (այսուհետ՝ Որոշում) 1-ին կետով ԼԷ №0671 լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածը երկարաձգվել է մինչև 2023 թվականի հունիսի 10-ը, ինչից ելնելով՝ Որոշման 2-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով Ընկերությունը պարտավորեցվել է Որոշումն ուժի մեջ մտնելու պահից մեկամսյա ժամկետում 6 250 000 (վեց միլիոն երկու հարյուր հիսուն հազար) դրամը փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե և քառասունհինգօրյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել 12 500 000 (տասներկու միլիոն հինգ հարյուր հազար) դրամ գումարի երաշխիք՝ մինչև 2023 թվականի հուլիսի 25-ը գործողության ժամկետով,

գ) Որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված երաշխիքի ներկայացման պարտավորությունը Որոշմամբ սահմանված ժամկետում՝ այն է մինչև 2022 թվականի հունվարի 24-ը, Ընկերության կողմից չի կատարվել, ինչի արդյունքում նշված փաստի ուսումնասիրության նպատակով Ընկերության նկատմամբ 2022 թվականի հունվարի 26-ից հարուցվել է վարչական վարույթ, որի վերաբերյալ Ընկերությունը ծանուցվել է Հանձնաժողովի 2022 թվականի հունվարի 26-ի №ԳԲ/34.1-Մ2-5/255-2022 գրությամբ,

դ) Ընկերությունը, հարուցված վարչական վարույթի շրջանակում, ի կատարումն Որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետի, 2022 թվականի փետրվարի 3-ի գրությամբ ներկայացրել է երաշխիքը,

ե) Հանձնաժողովի կողմից իրականացված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը խախտել է Որոշմամբ սահմանված երաշխիքի ներկայացման պարտավորությունը, մինչդեռ մինչև պատասխանատվության միջոց կիրառելու մասին Հանձնաժողովի որոշման ընդունումը, վերացրել է թույլ տված խախտումը՝ Հանձնաժողով ներկայացնելով Որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված երաշխիքը, և այդ խախտման հետևանքով չի վտանգվել և չէր կարող վտանգվել համակարգի անվտանգությունը կամ հուսալիությունը, այն ուղղակիորեն չի հանգեցրել մի խումբ սպառողների իրավունքների կամ օրինական շահերի խախտման, լիցենզիայի պայմանների կոպիտ խախտման, այլ կարգավորվող անձի օրինական շահերի խախտման, կարգավորվող գործունեության խոչընդոտման կամ լիցենզիայի պայմանների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման, և առկա չէ խախտման կատարման կրկնակիություն: Տվյալ դեպքում, Հանձնաժողովը գտնում է, որ հարուցված վարչական վարույթն ենթակա է կարճման, և

հիմք ընդունելով «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, 34-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Կարճել Ընկերության նկատմամբ Որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պարտավորության խախտման փաստի ուսումնասիրման նպատակով 2022 թվականի հունվարի 26-ին հարուցված վարչական վարույթը:
2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
-- մարտի 2022թ.